Ռափայել Պատկանյան

Տաճկահայերի օրհաս

Գիտո՛ւն, թո՛ղ գիրքը, ժամ չէ կարդալու,
Գեղջուկ, դու էլ թո՛ղ եզներն ու գութան,
Տեր-հայր, դադարե՛ մեռել թաղելու,
Երկունքի մեջ է մայր մեր Հայաստան . . .

Երկունքի մեջ է Հայաստան աշխարհ,
Մեզ պիտի շնորհե մի նոր գոյություն,
Փափաքով սպասած ամենեն շատ դար՝
Հայոց աշխարհի սուրբ ազատություն:

Մոռանանք պահ մի հին հաշիվները,
Թողնենք առօրյա անձնական շահը,
Հանե՛նք սըրտերես մեր պիղծ կըրքերը,
Հանե՛նք սըրտերես ըստըրկի ահը:

Քրիստոնյա ենք մենք և սերունդ Հայկի,
Այսքան բա՜վ է: Է՛լ լուսավորչական,
Կամ պապադավան և կամ լոթրանգի
Ազգը չի բաժնենք՝ ի սեր հայության:

Ծանըր երկունքի մեջ է Հայաստան,
Տա՛նք թեթևություն նորա ցավերին,
Նորա ծընելու գեղեցիկ մանկան,

Թույլ չընտանք խեղդել թըշնամիներին:

Նորածնի առջև բանանք մեր գանձը .
Հարուստը՝ ոսկի, ուժը՝ պատանին,
Հարսը՝ յուր փեսան, քաջը՝ յուր անձը,
Կոնդակի շանթեր՝ սուրբ Էջմիածին:

Աստված մեզ խըղճաց վերջին այս նվագը,
Բացեց մեր պառավ մոր ամուլ արգանդ,
Թե հայը մարդ է՝ կազատվի ազգը,
Թե չէ՛, Հայաստան կըլնի քարքանդ: